ՀՀԿ

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌԱՐՁԱԿՈՂԻ ԽՈՐՀՈՒՐԴ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 սեպտեմբեր, 2024 թվականի № 63-Ա

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ ՄՈՎՍԻՍՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԽՐԱԽՈՒՍՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեսալսողական մեդիայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 24-րդ հոդվածի 1-ին, 2-րդ, 4-րդ և 5-րդ մասերով, 26-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով և 27-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասով, Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 215-րդ հոդվածի 1-ին մասով, 219-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, հաշվի առնելով «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ նաև Ընկերություն) գործադիր տնօրեն Հովհաննես Մովսիսյանի կողմից աշխատանքների արդյունավետ կազմակերպման ու ղեկավարման հանգամանքը՝ Հանրային հեռարձակողի խորհուրդը ո ր ո շ ու մ է.

1. Ընկերության գործադիր տնօրեն Հովհաննես Մովսիսյանի նկատմամբ կիրառել խրախուսման միջոց՝ կատարելով միանվագ դրամական պարգևատրում իր՝ Ընկերության հետ կնքված աշխատանքային պայմանագրով սահմանված մեկ ամսվա հաշվարկային աշխատավարձի չափով:
2. Սույն որոշման 1-ին կետում նշված միանվագ դրամական պարգևատրումը կատարել Ընկերության միջոցների հաշվին սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից մեկ ամսվա ընթացքում:
3. Սույն որոշումը ենթակա է կատարման Ընկերության գործադիր տնօրենի կողմից իր իրավասության սահմաններում:

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌԱՐՁԱԿՈՂԻ
ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ Վ. ԹԵՎՈՍՅԱՆ

13 սեպտեմբեր, 2024 թվականի

ք. Երևան